ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1358

ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՓՈՂՈՑ 32 ՀԱՍՑԵՈՎ, 06-007-0046-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Վլադիմիրի Մարտիրոսյանի և Արեն Լեռնիկի Զատինյանի լիազորված անձ Ալլա Ալեքսանդրի Զոհրանյանի կողմից 03.11.2025թ. ներկայացված թիվ 2648 և 2643 դիմումները, 29.04.1988թ. սեփականության վկայագրերը «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, 17.10.2025թ. տրված լիազորագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագրեր 06011AULCSAR և 060112N9S2U9 ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570 Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան Սովետների փողոց թիվ 32 հասցեով, 06-007-0046-0029 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի նոր փոստային հասցեները և հողամասերի մակերեսները, համաձայն «Արտյոմ

Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծերի.

ա) 0.04802 հա մակերեսով ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող Անահիտ Վլադիմիրի Մարտիրոսյանին պատկանող 87.3 քմ մակերեսով բնակելի տան փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Ֆ. Նանսենի փողոց 32 բնակելի տուն:

բ) 0.04802 հա մակերեսով ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող Արեն Լեռնիկի Չատինյանին պատկանող 103.7 քմ մակերեսով բնակելի տան փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Ֆ. Նանսենի փողոց 32/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2025 թվականի N 1359

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՐԵԺ ԱՍՔԱՆԱԶԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վրեժ Ասքանազի Ասատրյանի կողմից ներկայացված դիմումը, գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14112025-06-0163 որոշումը, 17.05.2010թ. թիվ 2483337 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 07.07.2025 թվականի ճշտված սահմանային չափերով և մակերեսով կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը /հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանք ծածկագիր 2025UGGYCX/, Ստեփանավան համայնքի ղեկավարի՝ 26.12.2024թ. հասցե տրամադրելու մասին թիվ 1288 և 13.12.2024թ. թիվ 1257 որոշումները, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշմամբ. **որոշում եմ**

1. Ճշտել՝ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան Անտառային փողոց 1-ին նրբանցք թիվ 3 հասցեի, 06-007-0059-0002 կադաստրային ծածկագրի մաս կազմող հողամասի սահմանային չափերը և մակերսը համաձայն «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 07.07.2025 թվականի ճշտված

սահմանային չափերով և մակերեսով կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծի համաձայն:

2. «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 13.01.2025թ./մոտքագրման տեղեկանքի ծածկագիր թիվ 202576UFGC/ կազմված, նշված հասցեի անշարժ գույքի պետական գրանցման համար ներկայացված հատակագիծը համարել չեղարկված:

3. Ճշտված սահմանային չափերով և ճշտված 0.00913 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Վրեժ Ասքանազի Ասատրյանի սեփականության իրավունքը:

4. Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Անտառային փողոց 1-ին նրբանցք թիվ 3 հասցեի, 06-007-0059-0002 կադաստրային ծածկագրի մաս կազմող անշարժ գույքի պետական գրանցման համար հիմք ընդունել «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 07.07.2025 թվականի ճշտված սահմանային չափերով և մակերեսով կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը /հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանք ծածկագիր 202576UFGC /:

5. Թիվ Կ-14112025-06-0163 կասեցման որոշման տեղեկացնում ենք, որ 17.05.2010թ. թիվ 2483337 սեփականության վկայականի համաձայն նշված հասցեի հողամասը պետական գրանցում է ստացել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամաս և համայնքի ղեկավարի 13.12.2024 թվականի թիվ 1257 որոշման համաձայն նշված հողամասում կառուցված շինությունը /անասնաշենքը/ համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006 թ. թիվ 912-Ն որոշմամամբ սահմանված կարգի օրինականացվել է որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս՝ ինքնակամ կառուցված, տնտեսական և օժանդակ շինություն (անասնաշենք) առանց նպատակային նշանակության փոփոխության:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2025 թվականի N 1360

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՐԵԺ ԱՍՔԱՆԱԶԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վրեժ Ասքանազի Ասատրյանի կողմից ներկայացված դիմումը, գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասի թիվ Կ-14112025-06-0167 որոշումը, 24.08.2005թ. թիվ 1232900 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 07.07.2025 թվականի ճշտված սահմանային չափերով և մակերեսով կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը /հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանք ծածկագիր 2025FLXYZ2/, Ստեփանավան համայնքի ղեկավարի՝ 26.12.2024թ. հասցե տրամադրելու մասին թիվ 1287 և 13.12.2024թ. թիվ 1258 որոշումները, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշմամբ. **որոշում եմ**

1. Ճշտել՝ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան Անտառային փողոց 1-ին նրբանցք թիվ 1 հասցեի, 06-007-0059-0002 կադաստրային ծածկագրի մաս կազմող հողամասի սահմանային չափերը և մակերսը համաձայն «ՍԱՄՎԵԼ

ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 07.07.2025 թվականի ճշտված սահմանային չափերով և մակերեսով կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծի համաձայն:

2. «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 13.01.2025թ./մոտքագրման տեղեկանքի ծածկագիր թիվ 20252EMU9X/ կազմված նշված հասցեի անշարժ գույքի պետական գրանցման համար ներկայացված հատակագիծը համարել չեղարկված:

3. Ճշտված սահմանային չափերով և ճշտված 0.03985 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Վրեժ Ասքանազի Ասատրյանի սեփականության իրավունքը:

4. Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Անտառային փողոց 1-ին նրբանցք թիվ 1 հասցեի, 06-007-0059-0002 կադաստրային ծածկագրի մաս կազմող անշարժ գույքի պետական գրանցման համար հիմք ընդունել «ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄԱՍԱՐԻ» ԱՁ-ի կողմից 07.07.2025 թվականի ճշտված սահմանային չափերով և մակերեսով կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը /հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանք ծածկագիր 2025FLXYZ2/:

5. Համաձայն Ստեփանավանի համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից տեղում կատարված ուսումնասիրության և Ստեփանավան քաղաքի ճշգրտված քարտեզի, թիվ Կ-14112025-06-0167 կասեցման որոշմամբ նշված 06-007-0059-0044 ծածկագրի հողամսի հետ համադրում առկա չէ: 06-007-0059-0044 ծածկագրի հողամասը պետական գրանցում է ստացել թիվ 17.05.2010թ. թիվ 2483337 սեփականության վկայականի համաձայն և նույնպես սեփականության իրավունքով պատկանում է Վրեժ Ասքանազի Ասատրյանին,

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1361

ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 190 ՀԱՍՑԵՈՎ, 06-007-0314-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտեմ Կոյայի Վերմիշյանի կողմից 24.12.2025թ. ներկայացված թիվ 3184 դիմումը, 18.11.2025թ. տրված N 18112025-06-0069 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագրեր 06011XZ85Q3J և 060116UE4HWC ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570 Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Հաստատել մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 190 հասցեով 06-007-0314-0019 կադաստրային ծածկագրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի նոր փոստային հասցեները և հողամասերի մակերեսները, համաձայն «Սամվել

Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծերի.

ա) 0.075 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց 192 հողամաս:

բ) 0.075 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց 192/1 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ